

Պ Ա Ր Ի Զ Ի Կ Ա Ն Ա Լ Ի Զ Ա Յ Ի Ա Ն

Վերջին, XIII-րդ Միջադարձին Բժշկական Համաժողովը Պարիզում գրաւել էր Ռուսաստանից բժիշկների բաւականին մեծ տոկոս: Ժողովում ներկայ եղած բժիշկների 6170 ընդհանուր թուից 805 Ռուսաստանից էր:

Հարկատու էր օգտուել Պարիզում դոնուելուց և ծանօթանալ այնտեղի ընդհանուր առողջապահական հիմնարկութիւնների հետ, ինչպէս կանալիզացիան է, ոռոգման դաշտերը և այլն: Այդ նպատակով Ռուսաստանի բժիշկներից մօտ 100 հոգի էքսկուրսիա կազմեցին այդ տեղերն այցելելու: Անձամբ տեսած լինելով այդ տեղերը, աւելորդ չեմ համարում ծանօթացնել մեր ընթերցողներին այդ փիթիսարի քաղաքի կանալիզացիայի հետ:

Երկու մեծ քարաշէն աւազաններ տարածուած են Սենա գետի ափին: Մէկը նրանցից, աւելի մեծը, բոլորովին կտրուած է գետից, այնպէս, որ մի կաթիլ կեղտոտ ջուր անգամ չէ ընկնում գետի մէջ: Միաւր, աւելի փոքրը, շինուած է այնպէս, որ ըստ ցանկութեան կարելի է աղբաջրերի մի մասը բաց թողնել գետի մէջ, Մեծ աւազանի մէջ ջրերը հաւաքուած են մշտական, իսկ փոքրը նշանակուած է բացառիկ դէպքերի համար, օրինակ, երբ յորդառատ անձրևներից լետող, աղբաջրերը փողոցներից հոսելով, մի կարճ ժամանակում այնքան շատանում են, որ մէկ աւազանի մէջ չեն տեղաւորվում, այն ժամանակ նրանց հաւաքում են փոքր աւազանի մէջ, ուր հնարաւոր եղածին չափ մաքրելով արդէն բաց են թողնում գետը:

Այդպիսով թէև խախտում է՝ «բոլորը՝ աղբաջրերի մէջ և ոչինչ Սինայի մէջ» սկզբունքը^{*)}, որ չախտուած էր յուլիսի 10-ին 1899 թ. Պարիզի քաղաքային խորհուրդի կազմած մի ծրագրի մէջ, բայց դա լինում է միայն բացառիկ դէպքերում: Սովորաբար, ինչպէս մենք կը տեսնենք, բոլոր աղբաջրերը նախապէս մաքրուած են կեղտոտութիւններից և միայն մաքուր և աղբիւրի ջրի նման պարզ ջրերը թողնում են գետի մէջ:

Ահա թէ ինչպէս է կատարվում աղբաջրերի մաքրումը:

Նախ և առաջ աղբաջրերից, մինչև աւազանի մէջ գրանց թափուելը, մի առանձին մեքենայի շնորհիւ հանում են մէջը լողացող փոքր ի շատ մեծ կտորները (փայտ, կաղամբ, փայտ և այլն): Ծակ ջրի մէջ չը լուծուած մանր կտորները հեռացնում են աւազանի չառակի վրայից: Այդ գործողութեան համար նշանակուած են առանձին ծառայողներ, որոնք մակոյկների մէջ լողալով աղբաջրի վրայ, մի տեսակ երկաթէ թաթերի նմանութիւն ունեցող գործիքով բռնում են աւազանի չառակի աղբը և ածում մակոյկների մէջ:

Աղբաջրերից հանած դիրտը իզուր չէ կորչում: Նա շատ հարուստ

*) Tout à l'égout et rien à la Seine.

է օրգանական մասերով և հողը պարարտացնելու համար հարուստ նւթ է ներկայացնում: Այդ աղբը տանում են բնակութիւններից հեռու տեղեր և փռում ամալի դաշտերի վրայ, ուր նրանք լուծուելով և խառնուելով հողի հետ, վերջինիս դարձնում են պիտանի վարուցանքսի համար:

Իսկ ի՞նչ են անում աաղանի մէջ մնացած ջուրը:

Աաղանի մօտ, մի ահագին շինութեան մէջ սարքած են վիթխարի ջրմուղներ (носоча), որոնք առանձին խողովակներով խրկում են այդ ջրերը ոռոգման դաշտերը: Այդ խողովակները, անցնելով գետի տակից և հասնելով դաշտերը, աչնտեղ ծառերի նման ճիւղատուրում են մեծ և փոքր ճիւղերի, որոնցից ամեն մէկը ոռոգում է դաշտերի մի մասը: Զիւղերի ծաղերին, որտեղից արդէն կեղտոտ ջուրը դուրս է գալիս հողի երեսը, լարմարեցրած են մի-մի խթաններ, որոնց շնորհիւ կարելի է ջուրը վարարացնել կամ պակասացնել: Ջրերը դաշտում հոսում են առուներով աչնպէս, որ ջրելով բոլսերի արմատները, նրանք բոլսերին ամենեւին չեն կաշում և չեն կեղտոտում:

Դաշտերը ծածկուած են գոյնզգոյն հոտաւետ ծաղիկներով. տանձ, խնձոր, դեղձ, սալոր և ուրիշ պտուղներ աչնքան լիքն են փոքրիկ ծառերի վրայ և աչնքան մեծ-մեծ, որ ճիւղերի տակ, եթէ նեղուկներ դրած չը լինեն նրանք ծանրութիւնից կը կոտորուէին: Քաղաքի համար ամբողջ բանջարեղէնը համարեալ՝ այդ դաշտերն են մատակարարում: Ատում են, որ այդ տեղ մի հեկտար հողի համար գիւղացիները առաջ տալիս էին քաղաքին 8—10 ֆրանկ տարեկան կապալ, իսկ այժմ 600—800 ֆր. են առաջարկում:

Ոռոգման դաշտերը օդոտուելով աղբոտ ջրերի օրգանական մասերից՝ ընտիր բոլսեր և պտուղներ աճեցնելու համար, միեւնոյն ժամանակ մաքրում են նրանց աղտոտութիւններից թէ՛ մեքենաբար, ինչպէս ֆիլտր, պահելով իրանց վրայ ջրի մէջ լողացող չը լուծուած մասերը, և թէ՛ իւրացնելով լուծուած ամմիակը, օրգանական բորակածինը և աչնա:

Հողի տակ գցում են խողովակների մի ցանց (գրենաժ), որոնց շնորհիւ արդէն մաքրուած ջրերը հաւաքում են մի տեղ և աչնտեղից թափում գետը: Դրենաժի ջուրը աչնքան մաքուր է, որ նրա մէջ շարունակ լողում են ոսկեղոյն ձկներ: Ֆրանսիացի ուղեցոյցը աչցելուներիս առաջարկեց անուշ անել այդ ջրից, որ և կատարուեց բոլորի կողմից ախորժակով: Նրմակալ բնակիչները այդ ջուրը գործ են ածում թէ՛ խմելու և թէ՛ կերակրի համար:

Այդ դաշտերում վատ հոտ չէ զգացում: Այդ տեղերում պարսպող բանտարներ և շրմակալ բնակիչների առողջապահական դրութիւնը շատ լաւ է. խօլերա, տիֆ, կամ ուրիշ տարախոխիկ հիւանդութիւն գեա ևս աչց տեղ չէ նկատուել: Բեռլինում աչց տեսակ դաշտերի մէջ աչժմ շինուած են նոյն իսկ տներ հիւանդութիւնից առողջացածների համար, որոնք դուրս գալով քաղաքային հիւանդանոցներից, գեա կազդուրուելու կարիք ունենա: Աչցպէս են ոռոգման դաշտերը: Աչժմ տեսները Պարիզի բուն կանաչիզայան:

Ինչպէս երեւի չալտնի է, Պարիզի բոլոր կեղտաջրերը խոհանոցներից, արտաբնոցներից, փողոցներից և աչնա՝ խողովակներով թափում են փողոցների տակ դաշնուող անցքերի մէջ, որոնք իրանց կաղմից միանում են աւելի մեծ անցքերի հետ, վերջիններս ևս աւելի մեծերի և աչնա, աչնպէս որ աղտոտութիւնները հաւաքում են վերջ ի վերջոյ մի քանի շատ մեծ առուների կամ կոյուղիների մէջ (collecteur, Collecteur-ը

կամ կոյուղին հողի տակ շինուած մի մեծ կամարակապ նրբանցք (коридоръ) է, որի յատակով հոսում են ջրերը. կողքերից շինուած են մայթեր (тротуаръ), որ բանտորները կարողանան անց ու դարձ անել: Երկու կողմի պատերին կից անցնում են չռւղուէ ահագին խողովակներ, որոնց միջով հոսում են մաքուր ջրերը՝ քաղաքի բնակիչներին մատակարարելու համար: Այդտեղ են գտնուում նոյնպէս հեռախօսական և հեռագրական թելերը *): Collecteur-ը լուսաւորւած է ելէքտրական լուսով:

Մարդ զմայլում է այդ ստորերկրեայ կոյուղու օդի մաքրութիւնից, որ առաջ է գալիս լաւ վենտիլեացիայից ու ջրի շատութիւնից: Ջրի մէջ սաստիկ նօսարանում են կեղտոտութիւնները, այդ պատճառով collecteur-ում համարեա հոտ չէ զգացում: Այդ ստորերկրեայ ճանապարհին տեղ-տեղ երևում են մեծ ու փոքր առուններ, որոնց ջրերը միանում են collecteur-ի մէջ հոսող ջրին: Կոյուղու մէջ անցուղարձ են անում երկաթուղիով ելէքտրական կառքեր: Կարելի է գրօսնել և նաւակներով, որոնք շարժւում են ջրի հոսանքի շնորհիւ առանց կողմնակի ուժի: Պարիզի այդ ստորերկրեայ աշխարհից դուրս գալով նրա լոյս աշխարհը, մարդ ցաւում է, որ Կովկասի նոյն իսկ հարուստ քաղաքները զուրկ են դեռ կանաչիզացիայից, չը նայած որ նա անհրաժեշտ է քաղաքներում համախմբուաճ բնակիչների առողջապահական տեսակէտից:

ԲԺ. Գ. Ս.

*) Պարիզի փողոցներում հեռախօսական և հեռագրական թելեր չը կան, որովհետեւ այն բոլորն էլ գեանի տակ են գտնուում: